ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"09" հոկտեմբերի 2026թ. N 2679-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 21 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 21 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

10/9/2026

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք. Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի

«------»----------2026թ.

N_____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 21

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

06.10.2026թ. ք. Երևան

2026թ. հոկտեմբերի 6-ին ժամը 11:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Դ. Իվանյանը
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Տ. Գասպարյանը
Կ. Մկրտչյանը

Օրակարգում՝

1. «Մուշ Արմեն» ՍՊ ընկերության «Գյումրի-Մարմաշեն և հետադարձ» թիվ 07-010 ներմարզային միկրոավտոբուսային երթուղում նոր ավտոտրանսպորտային միջոց ներառելու մասին գրությունը:
2. ԱՁ Գագիկ Դավթյանի «Երևան-Իջևան» թիվ 654 միջմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցները նորերով փոխարինելու մասին գրությունը:

Քննարկվեց

1. «Մուշ Արմեն» ՍՊ ընկերության «Գյումրի-Մարմաշեն և հետադարձ» թիվ 07-010 ներմարզային միկրոավտոբուսային երթուղում նոր ավտոտրանսպորտային միջոց ներառելու հարցը:
2. ԱՁ «Գագիկ Դավթյանի» «Երևան-Իջևան» թիվ 654 միջմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցները նորերով փոխարինելու հարցը:

Որոշվեց՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման պահանջներով՝

1. Թույլատրել «Մուշ Արմեն» ՍՊ ընկերությանը «Գյումրի-Մարմաշեն և հետադարձ» թիվ 07-010 ներմարզային միկրոավտոբուսային երթուղում ներառել ԳԱԶ ԼՈՒԻԴՈՐ 225000 մակնիշի 532 HS 61 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը:

2. Թույլատրել ԱՁ Գագիկ Դավթյանի «Երևան-Իջևան» թիվ 654 միջմարզային երթուղում շահագործվող «Գազ 322132» մակնիշի 4453L հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը փոխարինել «Գազ 32212» մակնիշի 37WL299 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով, իսկ «Գազ 322132» մակնիշի 3860L հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը՝ «Գազ 32212-264» մակնիշի 37WL298 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներով՝ համաձայն Կարգի 44-րդ կետի:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Դ. Իվանյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Տ. Գասպարյան

Կ. Մկրտչյան